ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Հորդորներ	Քրիստոնեական շնորհներ	Քրիստոնեական պարտավորություններ (3:18-4:6)	Խրատներ	Առաքելական Հոգի
4:2-6	4:2-6	4:2-4 4:5-6	4:2-4 4:5-6	4:2-4 4:5-6
Վերջին ողջույններ	Վերջին ողջույններ	Վերջաբան	Հրաժեշտի խոսք	Անձնական նորություններ
4:7-9	4:7-15	4:7-9	4:7-9	4:7-9 Ողջույն և Վերջին մաղթանքներ
4:10-27		4:10-17	4:10-11 4:12-14 4:15-17	4:10-14 4:15-17
	Փակման հորդոր-ներ և օրհնություն 4:16-18			
4:18		4:18	4:18ա 4:18բ	4:18

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4:2-4
2Շարունակ աղոթեցե՛ք, արթո՛ւն հսկումով և շնորհակալությամբ: 3Աղոթեցե՛ք նաև մեզ համար, որ Աստված դուռ բացի Խոսքը քարոզելու՝ Քրիստոսի խորհուրդը հայտնելու, որի պատճառով կապանքների մեջ եմ. 4որպեսզի այն ինչպես պետքն է կարողանամ հայտնի դարձնել:

4:2

NASB, NRSV	**«ձեր անձերը աղոթքի ընծայեք»**
NKJV	**«շարունակ աղոթեցե՛ք»**
TEV	**«աղոթքի մեջ հարատևե՛ք»**
NJB	**«հարատևող եղե՛ք ձեր աղոթքներում»**

Սա ներկա ներգործական հրամայական եղանակ է՝ «շարունակեք ձեր անձերը նվիրել աղոթքի»: Աղոթքը այլընտրանքային չէ: Աղոթքը կենսական կարևորություն ունի Քրիստոնեական կյանքի և ծառայության համար (տես՝ Եփես.6:18-19, Հռոմ.12:2, Փիլ.4:6, 1 Թեսաղ.5:17): Եթե Հիսուսը, լինելով մարմին հագած Աստված, բնութագրվում է թե՛ հրապարակայնորեն և թե՛ առանձին՝ մեկուսացած աղոթելիս, ապա որքան ավելի հավատացյալները կարիք ունեն աղոթելու ավետարանի համար, իրենց համար, և մեկը մյուսի համար: Տե՛ս Հատուկ Թեմա. Արդյունավետ Աղոթք, Եփես.6:19

NASB, NRSV, TEV	**«արթո՛ւն մնալով»**
NKJV	**«զգոն լինելով»**
NJB	**«արթուն մնացե՛ք»**

Սա ներկա ժամանակի ներգործական սեռի դերբայ է՝ գործող որպես հրամայական: Աղոթքը պահանջում է ծրագրավորում, հարատևություն և զգաստություն՝ զգոնություն: Այն պետք է դառնա ապրելակերպ, ոչ թե իրադարձություն:

❖ **«շնորհակալությամբ»** Ուշադրություն դարձրե՛ք Կող.4:2-ում աղոթքի չորս առանձնահատկությունները: Նաև հիշե՛ք, որ Պողոսը բանտարկյալ էր, մինչդեռ այս նամակը շեշտադրում է «գոհունակությունը» (տես՝ Կող.1:3,12, 2:7, 3:15-17, 4:2): Աստվածաշնչյան ճշմարտությունը (աշխարհայացք) արմատապես փոխում է մարդու կյանքից ունեցած սպասելիքները (տես՝ Հռոմ.8:31-39): Գոհունակությունը հատկանշական է Հոգով լեցուն կյանքին (տես՝ Եփես.5:20, 1 Թեսաղ.5:18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: THANKSGIVING

I. Ներածություն
   Ա. Աստծո հանդեպ հավատացյալների ցուցաբերած պատշաճ վերաբերմունք է՝
      1. Սա Քրիստոսի միջոցով Աստծուն ուղղված մեր փառաբանության աղբյուրն է
         ա. 2 Կորնթացիների 2:14
         բ. 2 Կորնթացիների 9:15
         գ. Կողոսացիների 3:17
      2. Սա ծառայության համար ճիշտ շարժառիթ է, 1 Կորնթ.1:4
      3. Սա երկնքում անփոփոխ թեմա է՝
         ա. Հայտնություն 4:9
         բ. Հայտնություն 7:12
         գ. Հայտնություն 11:17

4. Սա հավատացյալների անփափոխ թեման է՝
   ա. Կողոսացիների 2:7
   բ. Կողոսացիների 3:17
   գ. Կողոսացիների 4:2

II. Աստվածաշնչյան նյութեր

Ա. Հին Կտակարան

1. Երկու հիմնական բառեր
   ա. *yadah* (BDB, 392, KB 398) որը նշանակում է փառաբանություն
   բ. *todah* (BDB 392, KB 1695), որը նշանակում է գոհություն: Այն սովորաբար կիրառվում է մատուցված զոհերի համար (տես՝ 2 Մնաց. 29:31, 33:16)
2. Դավիթը նշանակել էր հատուկ Ղևտացիների, որոնք փառաբանում և գոհություն էին մատուցում Աստծուն: Սա շարունակվեց Սողոմոնի, Եզեկիայի և Նեեմիայի օրերին էլ:
   ա. 1 Մնացորդաց 16:4,7,41
   բ. 1 Մնացորդաց 23:30
   գ. 1 Մնացորդաց 25:3
   դ. 2 Մնացորդաց 5:13
   ե. 2 Մնացորդաց 7:6
   զ. 2 Մնացորդաց 31:2
   է. Նեեմիա 11:12
   ը. Նեեմիա 12:24,27,31,38,46
3. Սաղմոսաց գիրքը Իսրայելի փառաբանության և գոհության երգերի հավաքածու է:
   ա. Գոհություն ՅԱՀՎԵԻՆ Իր Ուխտի հավատարմության համար
      (1) Սաղմոս 107:8
      (2) Սաղմոս 103:1բ
      (3) Սաղմոս 138:2
   բ. Գոհությունը Տաճարում մատուցվող պատարագի մի մասն էր կազմում
      (1) Սաղմոս 95:2
      (2) Սաղմոս 100:4
   գ. Գոհություն բարձրացվում էր զոհերի ժամանակ
      (1) Սաղմոս 26:7
      (2) Սաղմոս 122:4
   դ. Գոհություն էր մատուցվում ՅԱՀՎԵԻ գործերի համար
      (1) Թշնամիներից ազատելու համար՝
         (ա) Սաղմոս 7:17
         (բ) Սաղմոս 18:49
         (գ) Սաղմոս 28:7
         (դ) Սաղմոս 35:18
         (ե) Սաղմոս 44:8
         (զ) Սաղմոս 54:6
         (է) Սաղմոս 79:13
         (ը) Սաղմոս 118:1,21,29
         (թ) Սաղմոս 138:1
      (2) Բանտից ազատելու համար (փոխաբերություն), Սաղմոս 142:7
      (3) Մահից ազատելու համար
         (ա) Սաղմոս 30:4,12
         (բ) Սաղմոս 86:12-13
         (գ) Եսայի 38:18-19
      (4) Նա իջեցնում է ամբարշտին և արդարին բարձրացնում

(ա) Սաղմոս 52:9
(բ) Սաղմոս 75:1
(գ) Սաղմոս 92:1
(դ) Սաղմոս 140:13
(5) Նա ներում է
(ա) Սաղմոս 30:4
(բ) Եսայի 12:1
(6) Նա հոգ է տանում Իր ժողովրդի համար
(ա) Սաղմոս 106:1բ
(բ) Սաղմոս 111:1
(գ) Սաղմոս 136:1,26
(դ) Սաղմոս 145:10
(ե) Երեմիա 33:11

Բ. Նոր Կտակարան

1. Շնորհակալություն և գոհություն բառերի համար կիրառվող հիմնական տերմինները (մի քանի մեջբերումներ)
   ա. *eucharisteō* (տես՝ 1 Կորնթ. 1:4,14; 10:30; 11:24; 14:17,18; Կող. 1:3,12; 3:17)
   բ. *eucharistos* (տես՝ Կող. 3:15)
   գ. *eucharistia* (տես՝ 1 Կորնթ. 14:16; 2 Կորնթ. 4:15; 9:11,12; Կող. 2:7; 4:2)
   դ. *charis* (տես՝ 1 Կորնթ. 15:57; 2 Կորնթ. 2:14; 8:16; 9:15; 1 Պետ 2:19)
2. Հիսուսի օրինակը
   ա. Նա գոհանում էր սնունդի համար՝
      (1) Ղուկաս 22:17,19 (1 Կորնթ. 11:24)
      (2) Հովհաննես 6:11,23
   բ. Նա գոհանում էր պատասխանված աղոթքի համար, Հովհաննես 11:41
3. Գոհունակության այլ օրինակներ
   ա. Աստծո պարգևի՝ Քրիստոսի համար, 2 Կորնթ. 9:15
   բ. Սնունդի համար
      (1) Գործք 27:35
      (2) Հռոմեացիների 14:6
      (3) 1 Կորնթացիների 10:30, 11:24
      (4) 1 Տիմոթեոս 4:3-4
   գ. Բժշկության համար, Ղուկաս 17:16
   դ. Խաղաղության համար, Գործք 24:2-3
   ե. Վտանգից ազատվելու համար
      (1) Գործք 27:35
      (2) Գործք 28:15
   զ. Բոլոր իրավիճակների համար, Փիլիպեցիների 4:6
   է. Բոլոր մարդկանց՝ հատկապես առաջնորդների համար, 1 Տիմոթեոս 2:1-2
4. Գոհության մյուս առանձնահատկությունները՝
   ա. Այն Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար, 1 Թեսաղ. 5:18
   բ. Այն վկայություն է Հոգով լեցուն կյանքի, Եփես. 5:20
   գ. Արհամարհելը մեղք է՝
      (1) Ղուկաս 17:16-17
      (2) Հռոմեացիների 1:21
   դ. Այն մեղքի հակաթույն է, Եփեսացիների 5:4
5. Պողոսի գոհությունը
   ա. Նրա օրինությունները եկեղեցու համար՝
      (1) ավետարանը քարոզելու համար

(ա) Հռոմեացիների 1:8
(բ) Կողոսացիների 1:3-4
(գ) Եփեսացիների 1:15-16
(դ) 1 Թեսաղոնիկեցիների 1:2
(2) շնորհված շնորհքի համար
(ա) 1 Կորնթացիների 1:4
(բ) 2 Կորնթացիների 1:11, 4:15
(3) Ավետարանը ընդունելու համար, 1 Թեսաղոնիկեցիների 2:13
(4) ավետարանը տարածելու մեջ համագործակցելու համար, Փիլիպպեցիների 1:3-5
(5) շնորհքի մեջ աճելու համար, 2 Թեսաղոնիկեցիների 1:3
(6) ընտրության մասին գիտության համար, 2 Թեսաղոնիկեցիների 2:13
(7) հոգևոր օրհնությունների համար, Կողոսացիների 1:12, 3:15
(8) տալու մեջ առատաձեռնության համար, 2 Կորնթացիների 9:11-12
(9) նոր հավատացյալներով ուրախանալու համար, 1 Թեսաղոնիկեցիների 3:9

բ. Նրա անձնական գոհունակությունը՝
(1) հավատացյալ լինելու համար, Կողոսացիների 1:12
(2) մեղքի կապանքից ազատագրվելու համար, Հռոմեացիների 7:25, 2 Կորնթ. 2:14
(3) այլ հավատացյալների զոհաբերվող գործի համար, Հռոմեացիների 16:4, 2 Կորնթ. 8:16
(4) որոշ գործերի համար, որոնք չէին ստացվում, 1 Կորնթացիների 1:14
(5) անձնական հոգևոր պարգևի համար, 1 Կորնթացիների 14:18
(6) ընկերների հոգևոր աճման համար, Փիլիմոն 4-5
(7) ծառայության մեջ ֆիզիկական ուժի համար, 1 Տիմոթեոս 1:12

III. Եզրահանգում

Ա. Մեր փրկվելուց հետո գոհությունը դառնում է մեր գլխավոր պատասխանն Աստծուն: Այն բխում է ոչ միայն խոսքերից, այլ նաև ապրելակերպից:

Բ. Ամեն ինչում գոհունակությունը Աստծո հոգածության մեջ հասուն կյանքի նպատակն է (տես՝ 1 Թեսաղ. 5:13-18):

Գ. Գոհությունը Հին և Նոր Կտակարաններում կրկնվող թեմա է: Արդո՞ք քո թեման է այն:

4:3 «աղոթեցե՛ք նաև մեզ համար» Պողոսը բարեխոսական աղոթքի կարիք ուներ: Կող. 4:3,4 (տես՝ Եփես. 6:19-20), նա աղոթում է ավետարանի իր քարոզչության հետ կապված երեք բանի համար՝

1. քարոզելու բաց դռան համար (տես՝ Գործք 14:27, 1 Կորնթ. 16:9, 2 Կորնթ. 2:12, Հայտն. 3:8)
2. ավետարանի խորհուրդը բացատրելու կարողության համար
3. ավետարանը պարզ ու հստակ խոսելու կարողության համար

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ
SPECIAL TOPIC: INTERCESSORY PRAYER

I. Ներածություն

Ա. Աղոթքը կարևոր է համաձայն Հիսուսի թողած օրինակի.
1. Անձնական աղոթք - Մարկ.1:35; Ղուկ.3:21; 6:12; 9:29; 22:31-46
2. Տաճարի մաքրում - Մատթ.21:13; Մարկ.11:17; Ղուկ.19:46
3. Աղոթքի նմուշ՝ օրինակ - Մատթ.6:5-13; Ղուկ.11:2-4

Բ. Աղոթքը, հոգատար Աստծո հանդեպ, որը ներկա է, կամենում է և կարող է մեր աղոթքների շնորհիվ մեր և ուրիշների օգտին գործել, մեր հավատքը շոշափելի գործողության մեջ դնելն է:

Գ. Աստված Ինքն Իրեն սահմանափակել է շատ ոլորտներում Իր զավակների աղոթքների հիման վրա գործելիս (տես՝ Հակ.4:2):

Դ. Աղոթքի գլխավոր նպատակը Երրորդության Աստծո հետ մեր փոխհարաբերությունն ու անցկացրած ժամանակն է:

Ե. Աղոթքի շրջանակը կարող է իր մեջ ներգրավվել հավատացյալների հետ առնչվող, անհանգստացնող ամեն ինչ և ամեն ոք: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ նորից ու նորից, եթե այդ միտքը կամ անհանգստությունը վերադառնում է:

Զ. Աղոթքը կարող է բովանդակել մի քանի տարր.

1. Փառաբանություն և երկրպագություն Երրորդության Աստծուն
2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և հոգածության համար
3. Մեր մեղքերի խոստովանությունը՝ թե՛ անցյալի և թե՛ ներկայի
4. Մեր կարիքների կամ փափագների համար խնդրվածք
5. Բարեխոսություն, որի ժամանակ Հոր առջև ենք բարձրացնում ուրիշների կարիքները

Է. Բարեխոսական աղոթքը առեղծված է: Այն մարդկանց, ում համար մենք աղոթում ենք, Աստված մեզնից ավելի շատ է սիրում, մինչդեռ մեր աղոթքները հաճախ ազդում են ինչ-որ փոփոխության, պատասխանի կամ կարիքի վրա ոչ միայն մեր ներսում, այլ նաև նրանց:

II. Աստվածաշնչյան աղբյուրը

Ա. Հին Կտակարան

1. Բարեխոսական աղոթքի մի քանի օրինակներ՝
   ա. Աբրահամը աղերսում է Սոդոմի համար. Ծննդ.18:22բ
   բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար.
      (1) Ելից 5:22-23
      (2) Ելից 32:31բ
      (3) 2 Օրինաց 5:5
      (4) 2 Օրինաց 9:18,25բ
      (5) 2 Օրինաց 9:18,25-29
   գ. Սամվելը աղոթում է Իսրայելի համար.
      (1) 1 Թագավորաց 7:5-6,8-9
      (2) 1 Թագավորաց 12:16-23
      (3) 1 Թագավորաց 15:11
   դ. Դավիթը աղոթում է իր երեխայի համար, 2 Թագավորաց 12:16-18
2. Աստված փնտրում է բարեխոսների, Եսայի 59:16
3. Գիտակցված, չխոստովանված մեղքը կամ անզղջում վերաբերմունքը ազդում է մեր աղոթքների վրա
   ա. Սաղմոսներ 66:18
   բ. Առակաց 28:9
   գ. Եսայի 59:1-2; 64:7

Բ. Նոր Կտակարան

1. Որդու և Հոգու բարեխոսական ծառայությունը
   ա. Հիսուսը
      (1) Հռոմեացիս 8:34
      (2) Եբրայեցիս 7:25
      (3) 1 Հովհաննես 2:1
   բ. Սուրբ Հոգին՝ Հռոմեացիս 8:26-27
2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
   ա. Աղոթում է հրեաների համար՝
      (1) Հռոմեացիս 9:1բ
      (2) Հռոմեացիս 10:1

բ. Աղոթում է եկեղեցիների համար՝
(1) Հռոմեացիս 1:9
(2) Եփեսացիս 1:16
(3) Փիլիպեցիս 1:3-4,9
(4) Կողոսացիս 1:3,9
(5) 1 Թեսաղոնիկեցիս 1:2-3
(6) 2 Թեսաղոնիկեցիս 1:11
(7) 2 Տիմոթեոս 1:3
(8) Փիլիմոն հ. 4
գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին, որ աղոթեն իր համար՝
(1) Հռոմեացիս 15:30
(2) 2 Կորնթացիս 1:11
(3) Եփեսացիս 6:19
(4) Կողոսացիս 4:3
(5) 1 Թեսաղոնիկեցիս 5:25
(6) 2 Թեսաղոնիկեցիս 3:1

3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
ա. Աղոթել միմյանց համար՝
(1) Եփեսացիների 6:18
(2) 1 Տիմոթեոս 2:1
(3) Հակոբոս 5:16
բ. Աղոթք հատուկ խմբերի համար՝
(1) մեր թշնամիների՝ Մատթ.5:44
(2) Քրիստոնյա մշակների՝ Եբր.13:18
(3) իշխանների՝ 1 Տիմ.2:2
(4) հիվանդների՝ Հակ.5:13-16
(5) ետ նահանջածների՝ 1 Հովհ.5:16

III. Պատասխանված աղոթքների համար պայմանները՝
Ա. Մեր փոխհարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ՝
1. Նրա մեջ բնակվելը՝ Հովհ.15:7
2. Նրա անունով՝ Հովհ.14:13,14; 15:16; 16:23-24
3. Հոգով՝ Եփես.6:18; Հուդա 20
4. Աստծո կամքի համաձայն՝ Մատթ.6:10; 1 Հովհ. 3:22; 5:14-15
Բ. Ճարժառիթները՝
1. Առանց վարանելու՝ Մատթ.21:22; Հակ.1:6-7
2. Խոնարհությամբ և ապաշխարությամբ՝ Ղուկ.18:9-14
3. Վատ նպատակով խնդրանք՝ Հակ.4:3
4. Եսասիրությամբ՝ Հակ.4:2-3
Գ. Այլ առանձնահատկություններ՝
1. Հարատևություն՝
ա. Ղուկաս 18:1-8
բ. Կողոսացիս 4:2
2. Ճարունակ խնդրել՝
ա. Մատթեոս 7:7-8
բ. Ղուկաս 11:5-13
գ. Հակոբոս 1:5
3. Տան մեջ անհամաձայնությունը՝ 1 Պետրոս 3:7
4. Գիտակից՝ հայտնի մեղքերից զերծ՝
ա. Սաղմոս 66:18
բ. Առակաց 28:9
գ. Եսայի 59:1-2

դ. Եսայի 64:7

IV. Աստվածաբանական եզրակացություն՝

Ա. Ինչպիսի՛ արտոնություն: Ինչպիսի՛ հնարավորություն: Ինչպիսի՛ պատասխանատվություն և պարտավորություն:

Բ. Հիսուսն է մեր օրինակը. Հոգին մեր առաջնորդն է, իսկ Հայրը՝ անհամբեր սպասում է:

Գ. Այն կարող է փոխել ձեզ, ձեր ընտանիքը, ձեր ընկերներին և աշխարհը:

❖ **«մեզ համար, որ Աստված դուռ բացի Խոսքը քարոզելու»** Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԿ-ՈՒՄ «ԴՈՒՌԸ»
SPECIAL TOPIC: "DOOR" IN THE NT

ՆԿ-ը գործածում է «դուռ» բառը մի քանի իմաստով՝

1. Ուղիղ՝ բառացի իմաստով
   ա. տների համար, Մատթ. 6:6, Մարկ. 1:33, 2:2, 11:7, վերնատուն, Հովհաննես 20:19,26
   բ. տաճարի համար, Գործք 3:2, 21:30
   գ. բանտի համար, Գործք 5:19,23, 12:6, 16:26-27
   դ. գերեզմանի համար, Մատթ. 27:60, 28:2, Մարկ. 15:46, 16:3
   ե. փարախի համար, Հովհաննես 10:1,2
   զ. դատարանի համար, Հովհ. 18:16, Գործք 12:13
2. փոխաբերական իմաստով
   ա. ժամանակի մոտ լինելու համար, Մատթ. 25:33, Մարկ. 13:29, Գործք 5:9, Հակ. 5:9
   բ. ճշմարիտ հավատքից ներս մտնելու արգելքի համար, Մատթ. 7:13-14, Ղուկ. 13:24, Հայտն. 3:20
   գ. կորած հավատքը փրկելու հնարավորություն, Մատթ. 25:10, Ղուկաս 13:25, Հայտն. 3:7
   դ. հավատքը փրկելու հնարավորություն, Գործք 14:27, Հայտն. 3:7
   ե. ծառայության հնարավորություն, 1 Կորնթ. 16:9, 2 Կորնթ. 2:12, Կող. 4:3, Հայտ. 3:8
   զ. հայտնություն, Հայտն. 4:1, 19:11
3. Հիսուսի անուններից, Հովհ. 10:7,9:

❖ **«Քրիստոսի խորհուրդը»** Տե՛ս Կող. 2:2-ի գրառումը և Եփես. 3:3-ում Հատուկ Թեման:

❖ **«որի պատճառով կապանքների մեջ եմ»** Եթե ներկայիս գիտնականները ճիշտ են, ապա Պողոսը բանտարկված էր Հռոմում մ.թ. 60-ականների սկզբին (տես՝ Կող. 4:18): Պողոսը պատահականությամբ չէր Հռոմում կամ Կայսեր առաջ դատվում: Սա կանխատեսված էր իր դարձի ժամանակ (տես՝ Գործք 9:15-16, Փիլ. 1:13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4:5-6

[5]Իմաստությամբ վարվեցե՛ք դրսիների հետ՝ ժամանակը փրկագնելով: [6]Ձեր խոսքն ամեն ժամանակ շնորհով համեմված լինի՝ ինչպես աղով, որպեսզի իմանաք, թե ինչպես պետք է արժանավայել պատասխան տաք ամեն մեկին:

4:5-6 Այս երկու համարները կապ ունեն ավետարանչության հետ: Հավատացյալները պետք է այնպես ապրեն, որ անհավատները (1) մեջք չդարձնեն, այլ (2) գրավվեն՝ շահվեն: Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թե՛ խոսքով և թե՛ կյանքով վկա լինի (տես՝ 1 Պետ. 3:15):

4:5

NASB	**«դրսինների հետ իմաստությամբ վարվեցե՛ք»**
NKJV	**«իմաստությամբ քայլե՛ք»**
NRSV	**«իմաստությամբ վարվեցե՛ք»**
TEV	**«Ձեր վարվելակերպի մեջ իմաստուն եղե՛ք»**
NJB	**«Իմաստությամբ գործե՛ք»**

Սա ևս մեկ ներկա ներգործական հրամայական է՝ «միշտ ձեր վարքը լինի իմաստությամբ»: Հավատացյալները պետք է լինեն մտադրված՝ նպատակադրված ավետարանիչներ: Ավետարանչությունը Աստծո կամքն է եկեղեցու համար (տես՝ Մատթ. 28:19-20): Յուրաքանչյուր հավատացյալ ավետարանի լրիվ դրույքով ծառայող է (տես՝ Եփես. 4:11-12):

NASB	**«առավելագույնս հնարավորությունից օգտվելով»**
NKJV	**«ժամանակը խնայելով»**
NRSV	**«ժամանակը ծախու առնելով»**
TEV	**«ցանկացած ձեր ունեցած հնարավորություն լավագույնս օգտագործելով»**
NJB	**«ներկա ժամանակը լավագույնս օգտագործելով»**

Սա ներկա չեզոք դերբայ է: Սա (*exagorazō*) տերմինն է, որը կիրառվում է նկարագրելու փրկագործությունը (տես՝ Գաղ. 3:13, 4:5): Սա ունի մեկին ստրկությունից հետ գնելու իմաստը ՀԿ-յան իմաստը, անգամ երբեմն մոտ բարեկամի *(go'el)* անձնական միջնորդությամբ: Այն այլաբանորեն կիրառվում էր որևէ բան լավագույն գնով կամ ճիշտ ժամանակին գնելու հնարավորությունը օգտագործելու իմաստով (տես՝ Եփես. 5:16):

Հավատացյալները պետք է ապրել աստվածահաճո կյանքեր և գործածեն աստվածային իմաստություն, որպեսզի երբ ավետարանչական և հոգևոր առիթներ ստեղծվեն, նրանք կարողանան դրանցից առավելագույնս օգտվել:

4:6 «խոսքը. . . համեմված. . . աղով/շնորհով» Հավատացյալները պետք է զգուշանան իրենց խոսքից (տես՝ Եփես. 4»29): Նրանց ճանաչելու են իրենց խոսքերից (տես՝ Մատթ. 15:1-20, Մարկ. 7:2-23) և դատվելու են իրենց խոսքերով (տես՝ Մատթ. 12:33-37, Ղուկ. 6:39-45): Մեր խոսքը և մեր կյանքերը հնարավորություններ կբացեն վկայելու համար: Դիտավորյալ մտադրությունն է հանդիսանում կարևոր բանալին, ոչ թե որ ավետարանչական մեթոդաբանությունն է ընտրում անձը կիրառելու: Աղոթքը, ոչ թե կատարյալ ներկայացնելը, կենսական նշանակություն ունի: ԻՄաստությունը օգտակար է, սակայն Հոգին վճռական գործոնն է: Տե՛ս Հատուկ Թեմա. Մարդկային Խոսք, Կող. 3:10-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4:7-9

7Իմ մասին Տյուքիկոսը ձեզ ամեն բան կպատմի, որը սիրելի եղբայր, հավատարիմ պաշտոնյա ու ծառայակից է Տիրոջով, 8և ում այդ նպատակով ուղարկեցի ձեզ մոտ, որպեսզի իմանա ձեր վիճակի մասին ու մխիթարի ձեր սրտերը, 9հավատարիմ ու սիրելի եղբոր՝ Օնեսիմոսի հետ միասին, որը ձեզնից մեկն է: Նրանք ամեն բան կպատմեն ձեզ ինչ որ կատարվում է այստեղ:

4:7-8 «Տյուքիկոս» Պողոսը մի քանի անգամ նշում է Տյուքիկոսին (տես՝ Գործք 20:4, Եփես. 6:21, 2 Տիմ. 4:12 և Տիտոս 3:12): Նա էր այս նամակը տանողը, ինչպես նաև Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակները: Պողոսն ուղարկեց նրան, որպեսզի Փոքր Ասիայի եկեղեցիներին բացատրեի վիճակները, որպեսզի իմանան, թե ինչպես ավելի լավ աղոթեն իր համար և ուրախանան իր հետ (տես՝ Կող. 4:8 և ներածություն):

4:8 «սրտեր» Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 2:2-ում:

4:9 «Օնեսիմոս» Օնեսիմոսը փախուստի դիմած ստրուկ էր, որը դարձի էր եկել Պողոսի միջոցով՝ բանտում: Պողոսը նրան հետ է ուղարկում իր Քրիստոնյա տիրոջ՝ Փիլիմոնի մոտ, որն ապրում էր Կողոսիայում և Պողոսը նրան լավ ճանաչում էր (տես՝ Փիլիմոնի թուղթը): Շատ կերպերով ստրուկի և ազատ մարդու միջև առկա այս լարվածությունը իսկական Քրիստոնեական սիրո արդյունավետ ստուգարք էր:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4:10-17
**10Ձեզ բարևում է Արիստարքոսը՝ իմ բանտարկյալ ընկերը և Բառնաբասի քրոջ որդի
Մարկոսը (որի մասին պատվեր ստացաք, որ եթե գա ձեզ մոտ, ընդունեցե՛ք նրան): 11Եվ
Հիսուսը՝ որ Հուստոս է անվանվում, որոնք թլփատությունից են. Աստծո թագավորության
համար միայն սրանք եղան իմ գործակիցները, դրանով մխիթարություն եղան ինձ համար:
12Բարևում է ձեզ Եպափրասը՝ Քրիստոսի ծառան, որը ձեզնից է, միշտ աղոթքների մեջ
տքնում է ձեզ համար, որպեսզի դուք անթերի ու կատարյալ մնաք ամեն ինչում, որ Աստծո
կամքն է: 13Վկայում եմ նրա մասին, թե նախանձախնդրություն ունի ձեզ համար և նրանց
համար, ովքեր Լավոդիկեում և Երապոլիսում են: 14Բարևում են ձեր սիրելի Ղուկաս բժիշկը
և Դեմասը: 15Բարևե՛ք Լավոդիկեում եղող եղբայրներին և Նիմփասին ու նրա տան
եկեղեցուն: 16Եվ երբ ձեզ մոտ կարդացվի այս թուղթը՝ կարդալ տվեք նաև Լավոդիկեի եկե-
ղեցու մեջ. նույն ձևով դուք էլ Լավոդիկե եկած թուղթը կարդացեք: 17Եվ Արքիպոսին ասա-
ցեք. «Զգո՛ւյշ եղիր ծառայությանդ մեջ, որ Տիրոջով ընդունեցիր, որպեսզի այն կատարես»:**

4:10-14 Տիմոթեոսը և վեց այլ ծառայակիցներ ուղարկեցին իրենց անձնական ողջույնները այդ եկեղեցուն: Այս յոթ ծառայակիցներից վեցի անունները նաև նշվում են Փիլիմոնին ուղղված նամակում: Տյուքիկոսը հավանաբար Փոքր Ասիայում Կողոսացիներին, Եփեսացիներին և Փիլիմոնին ուղղված նամակները հասցնողն էր:

4:10 «Արիստարքոս» Հրեա մի Քրիստոնյա, որի մասին շատ քիչ բան է մեզ հայտնի (տես՝ Գործք 19:29, 20:4, 27:2):

❖ **«իմ բանտարկյալ ընկերը»** Սա կարող է վերաբերել կա՛մ Քրիստոնեական ծառայությանը փոխաբերական իմաստով, կա՛մ էլ ուղղակի իմաստով հենց բանտարկությանը (տես՝ Հռոմ. 16:7, Փիլիմոն 23):

❖ **«Բառնաբասի քրոջ որդի Մարկոսը»** Հնարավոր է, որ Տիրոջ Ընթրիքի վայրը և Վերնատունը՝ Հիսուսի հարությունից հետո մի քանի անգամ հայտնվելու վայրը, եղել է հենց Հովհաննես Մարկոսի տունը (տես՝ Գործք 12:12): Նա է Մարկոս Ավետարանի հեղինակը և Պետրոս առաքյալի ընկերն ու դպիրը (տես՝ 1 Պետ. 5:13): Նա մի մեծ անհամաձայնության պատճառ դարձավ Պողոսի և Բառնաբասի միջև իրենց առաջին միսիոներական ճամփորդությունից հետո (տես՝ Գործք 12:25, 13:5, 15:36-39):

❖ **«եթե գա ձեզ մոտ, ընդունեցեք նրան»** Սա երրորդ կարգի պայմանական նախադասություն է: Պողոսը շատ էր բարկացել Հովհաննես Մարկոսի վրա, որ թողել էր առաջին միսիոներական թիմը: Այնուհանդերձ, ակնհայտ է, որ նրանք հաշտվեցին (տես՝ Գործք 12:25, 13:5, 15:36-39):

❖ **«Հիսուսը՝ որ Հուստոս է անվանվում»** TEV թարգմանության տարբերակը տալիս է «Հեսու»: «Հիսուս» և «Հեսու» անունները ծագել են եբրայերեն «ՅԱՀՎԵ» և «փրկություն» տերմիններից և եբրայերենում երկուսն էլ նույնն են (տես՝ Մատթ. 1:21): Այս Հուստոսը հայտնի էր Աստծուն, բայց անհայտ է մեզ:

❖ **«Աստծո թագավորությունը»** Համանման (Սինոպտիկ) Ավետարաններում սա շատ կարևոր՝ բանալի արտահայտություն է (տես՝ Հատուկ Թեմա, Եփես.5:5-ում): Հիսուսի առաջին և վերջին քարոզները, և Նրա առակներից շատերը, անդրադառնում են այս թեմային: Այն վերաբերում է Աստծո կողմից այժմ մարդկանց սրտերում թագավորելուն՝ տիրելուն: Զարմանալի է, որ Հովհաննեսը գործածում է այս արտահայտությունը միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակներում): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանքն» է բանալի տերմինը և փոխաբերությունը:

Այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսի ուսմունքների վախճանաբանական (վերջին ժամանակի) շեշտադրմանը: Այս «արդեն իսկ, բայց դեռ ոչ» աստվածաբանական պարադոքսը կապված է հրեական երկու դարաշրջանների՝ ներկայիս չար դարաշրջանի և գալիք արդարության դարաշրջանի գաղափարին, որի բացումը լինելու է Մեսիայի կողմից: Հրեաները ակնկալում էին միայն մեկ գալուստ՝ Հոգով լեցուն ռազմական առաջնորդի (ինչպես ՀԿ-ում Դատավորներն էին): Հիսուսի երկու գալուստները պատճառ եղան այս երկու դարաշրջանների հատմանը: Աստծո Թագավորությունը ներխուժեց մարդկային պատմություն Բեթլեհեմում Նրա մարմնավորմամբ: Սակայն Հիսուսը եկավ ոչ թե որպես Հայտնություն 19-ի ռազմական աշխարհակալ, այլ որպես Չարչարվող Ծառա (տես՝ Եսայի 53) և խոնարհ առաջնորդ (տես՝ Զաք.9:9): Ուստի Թագավորությունը բացված է (տես՝ Մատթ.3:2, 4:17, 10:7, 11:12, 12:28, Մարկ.1:15, Ղուկ.9:9,11, 11:20, 21:31-32), բայց ավարտված չէ (տես՝ Մատթ.6:10, 16:28, 26:64):

Հավատացյալները ապրում են այս երկու դարաշրջանների միջև ընկած լարվածության մեջ: Նրանք ունեն հարուցյալ կյանքը, սակայն դեռևս ֆիզիկապես մեռնում են: Նրանք ազատագրված են մեղքի իշխանությունից, սակայն դեռևս մեղք են գործում: Նրանք ապրում են «արդեն, բայց դեռ ոչ»-ի վախճանաբանական լարվածության մեջ:

❖ **«թլփատությունից»** Կող.4:7-11-ում թվարկված մարդիկ բոլորն էլ հրեա հավատացյալներ էին (իրենց անուններով):

❖ **«դրանով մխիթարություն եղան ինձ համար»** Այս տերմինը բառացի նշանակում է «ցավազրկել»: Հունարեն այս բառը անգլերեն լեզվով հնչող «paregoric» դեղորայքի անվան ծագման աղբյուրն է:

4:12 «Եպափրաս» Նա Կողոսիայի եկեղեցու հիմնադիրն էր (տես՝ Կող.1:7 և ներածությունը):

❖ **«միշտ տքնում է ձեզ համար»** Սա խիստ մարզական տերմին է, որը անգլերենի մեջ հանդես է գալիս որպես agony – տառապանք: Եպափրասը աղոթքի զինվոր էր (տես՝ Կող.4:13): Այս հավատացյալների համար նա աղոթում էր, որ (1) նրանք հաստատ մնան, (2) հասունանան, և (3) վստահ լինեն՝ հաստատվեն Աստծո լիարժեք կամքի մեջ:

4:13 «Լավոդիկե և Երապոլիս» Սրանք մյուս երկու քաղաքներն էին (Կողոսիայի հետ միասին), որոնք գտնվում էին Լիկուս հարթավայրում, որտեղ Եպափրասը երեք եկեղեցիներ էր սկսել:

4:14 «Ղուկաս» Նա Պողոսի մտերիմ միսիոներական ծառայակիցն էր և բժիշկ: Նա հեթանոս էր, և Ղուկաս Ավետարանի, Գործք Առաքելոցի հեղինակը:

❖ **«Դեմաս»** Հետագայում նա լքելու էր Պողոսին (տես՝ 2 Տիմ.4:10):

4:15 «Նիմփաս» Սա կարող է լինել կա՛մ արական սեռի կա՛մ էլ իգական սեռի ներկայացուցիչ: Ուշադրություն դարձրե՛ք, որ վաղ եկեղեցին հանդիպում էր սեփական տներում (տես՝ Հռոմ.16:5, 1 Կորնթ.16:19, Փիլիմոն 2):

4:16 «երբ ձեզ մոտ կարդացվի այս թուղթը» Պողոսի բոլոր նամակները, ոչ միայն Եփեսացիներինը

(շրջանառվող նամակ), փոխանցվում էին եկեղեցուց եկեղեցի և բարձրաձայն ընթերցվում ամբողջ համայնքի համար: Եկեղեցիները հավատում էին, որ Առաքյալներն Աստծուց ունեին յուրահատուկ, ներշնչված խոսք: Նրանց ցանկությունը լսելու այլ եկեղեցիներին և այլ իրավիճակների համար գրված Պողոսի բոլոր նամակները, ցույց է տալիս, թե ինչպես է Աստվածաշունչը բոլոր տարիքի, բոլոր մարդկանց էլ վերաբերում:

❖ **«Լավոդիկե եկած նամակը կարդացե՛ք»** Այս նամակը հավանաբար «Եփեսացիների» թուղթն է, որը շրջանառվող նամակ էր: Մարկիոնի Կանոնում Եփեսացիներին ուղղված թուղթը կոչվում է «Լավոդիկեցիներին ուղղված նամակ»: Եկեղեցու վաղ շրջանի հայրերից և ոչ մեկը չի մեջբերում որպես Լավոդիկեցիներին ուղղված նամակից:

4:17 «Արքիպոս» Արքիպոսը տնային եկեղեցու հովիվ էր (Փիլիմոն 2): Սկզբնական առաջնորդական պաշտոնները ֆունկցիաներ էին, որոնք կատարվում էին տեղական եկեղեցիներում շնորհալի՝ պարգևներ ունեցող հավատացյալների կողմից, որոնց չունեին արձակուրդներ կամ գրասենյակներ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 4:18
[18]Այս բարևը իմ՝ Պողոսիս, ձեռքով է գրված: Հիշեցե՛ք իմ կապանքները: Շնորհը ձեզ հետ լինի: Ամեն:

4:18 «իմ ձեռքով» Սա Պողոս առաքյալի վարվելաոճն էր՝ հաստատելու իր գրության իսկությունը՝ ինքնությունը (տես՝ 2 Թեսաղ. 2:2, 3:17): Սա նաև ենթադրում է, որ նա մշտապես իր հետ ուներ մի դպիր (տես՝ Հռոմ. 16:22), հավանաբար իր աչքերի խնդրի պատճառով (տես՝ Գործք 9:8-9,12,18, Գաղ. 4:15, 6:11), որը հավատում եմ իր «մարմնի փուշն» էր:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Թվարկե՛ք Կող. 4:2-3-ում աղոթքի երեք առանձնահատկությունները:
2. Թվարկե՛ք Կող. 4:5-6-ում Քրիստոնեական կյանքի չորս առանձնահատկությունները:
3. Քննարկե՛ք Կող. 4:7-14-ում նշված անհատներին: